

Յ Թ Ո Շ Ա Հ Ա Կ

„ՀԱՅ ՅԵԼԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱԸ“ ՕՐԳԱՆ

Ա Յ Բ Ռ Ի Բ Ե Կ

Նոյեմբեր, 1893 թ.

Այս ուրեն կայ կարդալ-գրել սովորեռ համար. կայ պրութեն, այսինքն տարրական օրէնքներ՝ զանազան մասնագիտութիւնների համար. կայ պրութեն նաև հասարակական խնդիրների շրջանում:

Դիբաղդաբար, այս վերջին տեսակի պրութենն անհամանալի կամ տարօրինակ է համարվում շատերի համար. Զընայելով, որ հասարակական երես դժներն աշխարհիս բոլոր անկիւններում պատմութիւնը դարձ ցդար կրկնում է զարմանալի նմանութեամբ՝ մեր յեղափոխականներից շատերի համար, կարծես, հայը և Հայաստանը մի բացառութիւն են; որ դուքս պիտի համարվին համամարդկային ընդհանուր օրէնքների ազդեցութիւնից: Հայ-յեղափոխականը չէ ուզում որ և է առընչութիւն ունենալ մարդկային պատմութեան հետ: Անմեղների անարատ արինով շաղախված, անարդարութեան սե դրոշմով կնքված, միիօնաւոր ժողովուրդների հառաջանքներով և սգով արատաւորված պատմութեան էջերը մենք չենք ուզում ձանաշել: Այս, յեղափոխական այբութենը գտնված, ընդունված չէ մեր դան ազան գործիչների կողմից:

Բայց չէ՞ որ այդ պրութենը կ'յ և չէ՞ որ նրա ընդունելը կը լինէր ամենանպատակայարմար միջոց մեր երկրի յեղափոխական ձգտումները մի ընդհանուր լեզով և ոգով արտայայտելու համար:

Այս, արդ այրութենը կայ, և մեզով չէ, որ նա ուղղվում է: Միմիայն, բնականաբար, նա կը մ'նայ անըմբունելի բու որ պյան “գործիչների” համար, որնք չեն արտայայտում ոչ բաւականաչափ զգացմունք դէպի մեր անբաղդ ժողովրդի անպաշտպան շահերը և ոչ էլ առողջ միտք՝ համամարդկային պատմութեան և ներկայ ժամանակների ուսումնասիրութեամբ հայի դրութիւնը լուսաբանելու համար:

Հայ ժողովուրդը ազան ու թիւն է ուզում, այս

ամենքի համար պարզ է, և այս խօսքը միակ տառն է մի այլ այլ թիւն է, որի անհրաժեշտութիւնն ընդհանուրի կողմից ընդունված պէտք է համարել: Բայց մի տառ այլ ու բեն չէ կազմում. այլ ից յետոյ գալիս է բենը:

Ի՞նչ է նշանակում ազան ու թիւն. ի՞նչ է հասկանում մեր ժողովուրդը ազան ու թիւն խօսքը արտասանելիս:

Շատերը կանեն. քաղաքական ազան ազան ու թիւն, ազան գայլին անկանութիւն, հայկական կառավարութիւնը մեր ժողովուրդն ուզում է միմիայն իր ազգային ինքնասիրութեանը բաւականութիւն տալի թէ սյդ դրութեան հետ նա անշուշտ կապում է առհաս առ առ առ կ ի ը կ ե ց ու թիւն ան ընդհանուր բարեկանութիւնը: Մենք չենք հերթում առաջին մօտիւի նշանակութիւնը բայց հակառակ ենք պյան հայացքներին, որոնք ժողովրդի դրութեան բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա անկախութեան հետ, համարելով սյդ բարեփոխումը ինքնըստինքեան հասկանալի, բնական, անհրաժեշտ հետեւանք անկախութեան: Սա է պյան քենը որի վերայ անհրաժեշտ է կանգ առնել: Բայց համաձայնվենք նախօրէն, որ իսկապէս ժողովուրդն ազատութիւն է կամենում ոչ թէ լոկ ազգային ինքնասիրութիւնից դրդված, այլ գլխաւորապէս իր առօրեայ կեանքը մաշող, ճնշող հանդամանքների ազդեցութեան ներքոյ:

Խօսեցրեք Հեքքեարի, Մանազկերտի, Ասանյ մի մասի հային, որը յայտնի է իր տեղում Փլահ (սարուկ) անուան տակ: Դա պատկան է այս կամ պյան քեւրդ աղպային, որը հարստահրում է նրան ուզածին պէս, ծախում է նրան ուրիշին 10-20-30 լիրայով, և միւնչյան ժամանակ հովանաւորում է հայ վաշխառուի

Հ. Յ. Բ. Բ Ի Ր Ո Ր Ե Կ
Ա Ր Վ Ա Ր Ա Մ
A.R.P. LIBRARY

և միւս քիւրդ աղաների գէմ. այդ հայրը որ տարին մի երկու անգամ հազիւ է տեսնում տէրութեան պաշտօնեայ, դժուար թէ հետաքրքրվի հայկական օրէնսդիր ժողովով կամ ազգային աղատ մամուլով. նրա համարի ի հարկէ աւելի բնական է աղատութեան առաջ հականալ Փլահ հի դրութիւնից դուրս գալս փէօդալ բէկի կամայականութիւնից անկաև լինելը և այլն . . .

Աւրցըէք կարնոյ դաշտի Փոքր Հայաստանի, Վանայ շրջակայքի ժողովուրդը. քրդերի յարձակումներն այս կողմերում նուազում են այն նշանակութեան առաջ որ ունեն հարկերի չափազանց ծանրութիւնը և վաշխառուների կողովտումները՝ վարչական կազմակերպութեան փթածութեան հետ միասին. Հարկային բարեփոխումները, հողի և նրանից ստացված արդիւնքների ազահովութիւնը զանազան էֆենդիների ճանկերից, աչա այն պայմանները, որ առաջնակարդ տեղ են բռնում այս հայերի կեանքում:

Ալաշկերտի հայրը իր յետին չքաւորութեան մէջ, աղատութիւնից աւելի շուտ կուզենար խաղաղ դրայի: Թէ որքան նշանաւոր է նրա համար այս պայմանը, այդ պարզ է նրանից, որ գիտենալով հանդերձ, որ ազգային անկախութիւնը Ուուսաստանի սահմաններում հայերի համար կատարեալ ցնորդ է. գիտենալով, որ ազգային ինքնասիրութիւնը պահանջում է հաստատ լինել իր ազգային կրօնին, այսուամենայնիւ իւր անհանգիստ դրացիկից-քրոդից-աղատվելու համար՝ նա այսօր պատրաստ է ամբողջ գաւառներու Ուուսաստան գաղթել և, եթէ պահանջվի, նաև ոռուսադաւանու թիւն ընդունել:

Խօսեցըէք. հայ գիւղացուն, հայ արհեստաւորին, վաճառականին կամ. հայ ինտելլիգենտին, ընդհանուր եղակացութիւնը բոլոր լսածներից կը լինի՝ ազատութիւնն ցան կան աւովլով, հայ ժողովուրդը ձգտում է այսպիսի գրութեան ու, որ ազատված յինի ինչպէս մահմեդականներից. համաձայնի իր անարդ դրութիւնից, ինչպէս օրէնքի առաջ եղած անհաւասարութիւնից, նշնչպէս և հարկերի ծանրութիւնից, քրդերի և պաշտօնեաների յափշտակութիւններից; բէկերի և վաշխառուների իշխանութիւնից, հողին վերաբերեալ զեղծումներից, իր յուսահատ չքաւորութիւնից, իր աստանդական մուրացկանի դրութիւնից և այլն . . .

Այժմ հարցնում ենք մենք. ի՞նչ կարդեր կարող են ապահովել այդ պահանջները. ի՞նչ կարդեր կարող են բաւականութիւն տալ իրավունքը դաստիարակութեան ու պատրաստութեան մէջ, միանալու ապահովութեան ու ապահովութեան մէջ, մասնաւոր ապահովութեան ու պատրաստութեան մէջ, մասնաւոր պահանջը զարգացնելու ապահովութեան ու պատրաստութեան մէջ, մասնաւոր պահանջը զարգացնելու ապահովութեան ու պատրաստութեան մէջ:

(Կը շարունակվի)

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ւ Ց

Համբդիէի հեծե ազօրքն անպատմելի, չըլսված գազանութիւն և շարիքներ կը դորձէ Մուշի, Վանայ դաւառներու մէջ և մեր կողմերը: Հայ ժողովուրդի կրած կեղեքու մները Համբդիէի հեծելազօրքի երեսէն ալ ամեն չափ ու սահման անցաւ: Ագոնց գործած ասպատակութիւն, յափշտակութիւն, բռնութիւն, սպանութիւն ու կամայականութիւններն աներեւակայից են: Յիշեալ հայաբնակ գաւառներու մէջ հայը այլ ևս իր անձի, գոյքի և պատու տէրը չէ: անապահովութիւնը կտիրէ ամեն տեղ: Կարինի, Ալաշկերտի ճանբան գոցված, հաղորդակցութիւնը դադարէ: Հաղորդակցութիւնը գագարած է մինչև իսկ հայ գիւղերու մէջ. 2-3 ժամ հեռաւորութիւն ունեցող գիւղերու մէջ անվասա, առանց կողովտվելու, առանց արինվելու, առանց սպանվելու ճանբորդութիւնը հրաշքներու կարգն անցած է: Ժողովրդի տնտեսական վիճակը յիշեալ զօքքերու շնորհիւ կատարելապէս քայլայված և յայգ թշուառ վիճակի մէջ է: Հեծելազօրքի կամայականութեան թեթև դիմադրութեան յանդգնողը չարացար

կը գանակոծվի և մահով կը պատմիվի: Երձակ համարձակ օր ցերեկով տաւար, ոչխար և ձի քշել տանելը սովորական գէալքերու կարգ անցած է: Համբդիէի հեծելազօրքը երկրի կատարեալ պատիմ, պատուհաս է դարձած իր հաստատմանէ: Ի վեր: Կառավարութիւնն այս ամենը քաջ գիտէ, բայց աչքերը կը գոցէ, գիտմամբ անդիտնալ կը ձևանայ: Բայց արևի լցոսի պէս ճշմարտութիւն է, որ կառավարութիւնն է, որ կը թելադրէ, նա է, որ կը քաջալերէ զօքքերը: Մէկալ քիւրդերն ալ օրինակ առնելով զօքքէն, ձեռքերէն եկած շարիք և լիսա կը հասցնեն հայ ժողովուրդին. մէկի պահաս թողածը մէկալը կը լրացնէ: Քանի մը անգամ կառավարութեան զիմումներ եղան, գանգատմիցացան զօքքի գործած չարիքներու և հասցրած լիսա դէմ, բայց անլսելի մնալէն զատ, գարձեալ իրենք տուժեցին, ըստ առաջին. "Դիր զմեղս ի վերս մեղաց", որովհետեւ շատերը պատմվեցան և բանտարկվեցան՝ իրեւ զօքքը յանիրաւի զրպարտողները տէրութեան անհաւատարիմներ և խոռվարեներ: Համբդիէի զօքքերը ճանբաներու վրա, լուները, գաշտերը ասպատակութիւն, թալան թրաշանելն զատ՝ մինչև իսկ գիշերը տուներ կը կուսեն և ինչ որ գտնին՝ կը յափշտակնեն: Շատ մը հարուստ կարծված տուներ կոխվեցան և կողովտվեցան. շատ մը ալ ընտանիքներու պատիւը բռնաբարվեցաւ: Աւրգին գազանութիւն ընողները Համբդիէի հեծե ազօրքի սպանելն են: Ասոնք մինչև իսկ օր ցերեկով մարդ կը խստրեն մէկու մը կինը, մէկալի հարսը, երրորդի քոյրը կը պահանջնիւ: Սպաներու պահանջը ըստ կատարողներ կը պատմին չարացը: Ոմանց խոռի գէկերը և մարագները կը վառեն, քանի մը վայրկենի մէջ մուսիր կը գարձունեն խեղճ գիւղացու և իր ընկեր տաւարի ամբողջ տարուայ սնունդը, միակ յայցը: Աւ բիշներու տաւարը կամ ոչխարը կը քշեն, արտը կը կերցնեն, իսկ ոմանց ալ հրացանի կը բռնեն, շատ անգամ նոյն իսկ իրենց տուներու մէջ:

Հայերը տեսնելով երկրի անմսիթար դրութիւնը կառավարութեան անտարբերութիւնը և անհոգութիւնը,

սկսած են թողնել տուն տնջ, արտ ու արօտ, վանք, եկեղեցի, սիրելիներու գերեզման, լաց արտասունքով, կուրած սրտով, մահ և ամեն վասնդ աչքի առաջ առնելով կը փախչին, կը գաղթեն սահմանագլխին Թուսիա, որպէս զի գէթ իրենց գլուխը փրկեն: Ծատերը փախած են առանց արտերը հնձելու, առանց ցորենը ժողվելու: Սահմանագլխին անցած փախած ընտանիքներու թիւը 400-500-էն աւել ի ին: Սահմանագլխի շատ մը հայրանակ գի զերն այժմ անմարդաբնակ են, իսկ շատերու մէջն ալ նախկին բնակիչներու հազի կէսը մնացեր են: Եթէ հնարիներին ներքին գառառներէն ևս գիրութեամբ փախչել, այժմ այդ գառառներն ալ աւեր ու անապատ, բնակիչներէն թափուր կը մնային, և աշկերտու նման:

Անցեալ ամսուն հայրենիք դարձող հայ պանդուխտաներու քարաւան մը կը զարնեն, կը կողոպտեն Համբդիէի հեծելազօքերը կարնոյ և Խոնուսի ճանրու վրայ. դիմադրութիւն լնող չորս կտրիճ անզէն հայեր ոչխարի պէս կը մորթվին:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց

Կոռուբաշ հայրանակ գիւղը, որ 70-80 տունէ կը բաղկանայ և Վանէն քիւ հեռու է, մի ամիս առաջ սոսկալի, քստմնելի. աղջախի հանդիսատես եղաւ: Այս քստմնելի գեաքի հերոսները Համբդիէի հեծելազօքերն են: Վատաղահաս աղջիկներու մի խումբ, թւով 13-14 հոգի, իրենց հետ զերցնելով 4 պատանիներ, կերթան ծաղիկ ժողվելու: Հենց այդ ժամանակ՝ Համբդիէի հեծելազօքերն 15-20 զինեալ քրդեր կը յարձակին աղջիկներու վրա. աղջիկները լցղապատառ կը սկսին փախչի և օգնութիւն առուալ: Սոսկալի վայնասուն կը սկսի: Պատանիները կը յաջողին փախչիլ՝ գիւղը լուր հացնելու, բայց քիւրդերը կը հասնին ետևներէն և հասած տեղին կը մորթեն չորսն ալ: Այսուհետև կը սկսին միառ լ կել աղջիկները և իրենց գաղանական կրքերը յագեցնել: Վատաղահասներէն երկուսը չեն դիմանար գաղաններու պատճառած ցաւերուն, արիւնաթաթախի չունչները կը փշեն նոյն իսկ գաղաններու բազկաց մէջ:

Քիւրդերը չորս անզէն գիւղացիներ խողխողելին և աղջիկները պղծելէն զերը, բաց կը թողնեն, կարծելով թէ վերջիններս իրենց չեն ճանչնար:

Բայց մի քանիսը կասկածելով թէ ճանաշվեր են, հետամուտ կը լինին աղջիկներուն ևս բոնել, սպանել: Արեւ մայր մտնելու ժամանակ կը լինի, աղջիկները բոլորին մերկ կը շտապին մէկ ու. կէս ժամու ճանապարհը կարել համար համար կը արթիւ հասնել: Յանկարծ իրենց ետևէն ճայն կը լսեն և զախնալով թէ նորից այն բարբարուներն իրենց ետևէն են ընկած, աճապարանօք քարերու ետևը, թփերու տակ կը պահվին թշուառները: Եւ սխալված չեն. քիւրդերը արագաբար ինտոելով կանցնին: Աղջիկները կէս ժամէն վերջ գաղտագողի զարտողի ճանապարհներով իրենց կը ձգեն գիւղը: Այսուհետ քիւրդը համախմբվելով նորէն կը գան սպանվածներու մօտ մէկի ականջները կը կտրնեն, կը վերցնեն հետերնին: 8 չորդոց մի քանիսը կերթան գէպի Արագի և կը մտնին Արագայ փարախը վանքից կէս ժամ հեռի, Վարագ

լեռան հարաւային ստորոտի վրա, այստեղ կրակ կանեն, արեան հետոքեր կը թողնեն և կանչետանան:

Դատեցէք, Խնդրեմ, այս բարբարոս աւազակները որչափ վստահութիւն ունին իրենցմէ աւելի աւազակ տաճիկ վարչութեան վրա, որ նախ սպանութիւնը կը կատարեն ցերեկով, գրէթէ կէս օրին, երկրորդ, կոյս աղջիկները կը տանին իրենց որջը, ամբողջ երեք ժամ կը պղծեն, ապա երկու ժամու չափ գէպի տեղի վրա լեռնային զբուանքը կատարելէ ետքը կը կորչին:

Մարդանալաններու Վարագայ փարախն երթալը միտք ունի. դէպքի ժամանակ սաստիկ կարկռտ եկաւ, հետեւայէս գիւրդելը իրենց կարծ խելքով փախստեան հնաքերը թողուցին Վարագայ վանքի վրա, որին սյնչափ հետամուտ է վերջերս արատաւորելու Բահրի փաշան:

Փարախի հետքը գատաստանի մէջ մէծ դեր պիտի խաղայ, ինչպէս կը տեսնենք յետոյ:

Եղեռնագործութեան միւս օրը Կուռուպաշցիք գիակները բերին գիւղ. ամբողջ գիւղը սգոյ մէջ էր և արտասուք կը թափէր այդ անողորմ սպանութեան վրա: Անտէրունչ ժողովուրդը երկեք յոյս չունենալով թէ կառավարութիւնը կը պատէ եղեռնագործներուն, կուզէր գիակները նոյն օրը թաղել: Սակայն գործը շուտով ձեմի տակ դրվեցաւ, գիւղացիները սպանվածները սպյլերու վրա գրին և բերին քաղաքը: Երաբք թաղի մէծ հրապարակը հասնելաւն պէս, հայերը սաստիկ յուղված շրջապատեցին իրենց խողովազմած եղարց գիակները: Յիրաւի, մարդակերն ալ սյուչափ անողորմ չէ, որչափ տաճիկ կառավարութիւնը և իր հաւատարիմ քիւրդերը: Զորսի գիակներն ալ ծածկված էին սրի մէծ վէլքերով: Թէկերի փափուկ միսը ձեռքերէն սկսած շերտ շերտ կտրտած, կախ էին ձգած մինչեւ վիղը. վիզները կտրտած էին և միսյն թողած էին ծոծրակի կաշին, որով գլխները կախ էր ինկած և անբաժան մնացած մարմնէն: Երաբքի պահականոցի ոստիկանութիւնը փորձեց մէջ մտնալ և արգելել գիակները քաղաքը. տանելու: Բորբոքված ժողովուրդն ընդդիմադրութիւն ըրաւ, զափտիաները վահնալով ետ քաշվեցան: Գնացքը, որ հետզինէ կստուարանար գրգռված հայերից, Քեանդրբէի թաղի մէջ կանգ առաւ. անգլիական հիպատոսի գրան առջեւ, վերջիննը տունը չէր. ապա իջաւ և աշ-փողոցը ուր խորհնողեալ գիակները տեսաւ ուստաց հիւպատոսի թարգմանը (հիւպատոսը բացակայ էր Վանէն), որտեղէն քիչ մը վար գալով, ժողովուրդը սայլերը կանգնեցրուց հարուստ նալբանդեանի դրան առ չէ: Այդ գարշելի տան մէջ էր Աղմամարայ Խաչատուր կաթուղիկոսը, որին գալին 15 օրէ ՚ի վեր հրաւիրած էր Աւան, որ լիբր Պողոս եպիսկոպոսին ընկերացնելով, քանի մը ծանը խընդիրներ, կործանիչ գաւաճանութիւններ՝ ՚ի գլուխ բերէր: Խոկոյն պատգամաւորութիւն մը կամեցաւ մտնել կաթուղիկոսի սենեակը, բայց Խաչատուր պահականոցը 20 ըայլ հեռու ընկերով՝ ոստիկանութիւնն իսկոր վրա հասած աղջիկները վաղմութիւնը գրուել ժողովուրդը սակայն բաղմութիւնը գրուի տաղով յարձակվեց ոստիկանաց վրա և քշեց: Պատգամաւորութիւնն մը ներիս

մտան, խնդրեցին կաթուղիկոսին ներկայանալ: Վերջինս սեղեակ լինելով այդ իրեն համար շատ անհաճելի գեպքին, դուրս եկաւ: Պատգամաւորները խնդրեցին վար իշնել անմեղ զոհերը տեսնել և կառքով իրենց հետ քաղաք երթալ: Կաթուղիկոսը երկիւղից քանի մը խօսք կը կմիմայ, ապա մօտենալով պատու հանին, վախկու հայացք մը կը ձգէ դիակներուն, կեղծ ախ մը կը քաշէ և ետ կը դառնայ, երեկի յուսալով, որ ուստիկանութիւնը շուտ կապատէ իրեն պյա ձախորդութենէն: Պատգամաւորները նկատելով անոր փախուստի պատրաստվելու, համարեա յարձակվելով կը պնդին իրենց առաջարկը բայց կաթուղիկոսը կը անգ:

— Խնդրեմ! հանդարալմէք, տեսայ և ամեն բան կը պատմեմ Ալալիին ու կերպով մը կը սողայ ներս, դուռը գոցելով:

Մարդիկ ուժգին կը բաղնեն դուռը և կը պահանջին վեհափառին, ըսերով.

— Զէ՞ որ վային Ձեզ Աղթամարից բերած է ժողովրդի ցաւերը դարձանելու, ուրեմն երթանք մեր ցաւերը տես:

Պօզոս եպիսկոպոսը լուսամուտի փեղը բանալով կը սէ.

— Աղբար, մեզմէ Բնէց կուզէք. Հօն, Հօն գնացէք, ձեր առաջնորդարանը:

— Դաւաճան, չուն քեզի ո՞վ կը հարցնէ, կը գոռան ամենը: Քանի մը Հոգի վար կիշնեն մարդ կանչելու, որ զոռով կաթուղիկոսին դու քաշէն: Փողացին մէջ ուրիշ բան տեղի կունենար. Ալալիին հասնելով՝ միջոցներ ձեռք առած էր շփոթութիւնը զսպելու, այդ պատճառով ամեն պահանջներէ ոստիկաններ կը վազն: Ոստիկանները ժողովուրդը ձեղքելով աշխատեցուն սայլերը եադարձնել, ամբոխը կատաղի կերպով դիմադրեց և ետ մշեց. զաֆտիաները սուր և փայտ խաղողոցին, ժողովուրդըն ալ դիմեց իր կոռուփին. 10-ի չափ հայերու և 5-6 ոստիկաններու գլուխ շարդվեցաւ, քիթ ու բերան արնով ներկվեցաւ: Մինչ այս շփոթութիւնը կը շարունակվէր, ստուար խումբ մը մտաւ կաթուղիկոսի բնակարանը և գոռալով կը պահանջէր կառք.

— Դու, որ վալիի խաթեր համար մատնիչ հարուստներու և գարշելի Պօզոս եպիսկոպոսի հետ՝ միանալով՝ բռնի հանրագրութիւն կը կազմէք խեղճ ժողովրդի բներնէն, իրը թէ թիւը, հայ և քիւրդ եղբօր պէս նաղադ կապրին. եկ, եկ, տեսնենք ձիշտ է: Կաթուղիկոսն երկիւղին ցամքած՝ ծպառն չէր հանեք. ժողովրդի համբերութիւնը հասնելով՝ կոռուփին եւ քացիներով և սենեակի գոները կը կոտրեն և Վեհափառին կը քաշեն ցած, դարձեալ իրենք ախոռէն ծիանները կը հանեն և կառք լծելով՝ Վեհափառին կը բազմեցնեն:

Կաթուղիկոսը դողալով կը հարցնէ, ուր պիտի երթանք:

— Նուի հեռագրատուն, ուր հեռադիր պիտի զարնես ստոթանին և պետութեանց ներկայացուցիչներու, ինչ որ տեսար և ինչ որ ըսենք, ապա վալիի մօտ, որոտաց ամբոխը:

Ամբոխի մի մասը սայլերը շրջապատած շուտ առաջ կը գնայ, որ կառքը առաջ չերթաց, իսկ մեծ մասը շրջապատած կառքը և ծիաններու սանձերը բռնած յամբընթաց յառաջ կը շարժվիք: Պօզոս եպիսկոպոս ծածուկ ոստիկան մը կը կանչէ և խստի կը պատուիրէ ծանապարհին ըստա գանվող պահանջը խստի դիմադրութիւն ընե-

լու: Սայլերն այդ պահականոցին հասնելուն պէս՝ ոստիկանները կարգելու, քանի որ հայերը քիչ էին. կառքը հասնելուն պէս, նորէն խստ ընդհարում տեղի կունենայ ժողովրդի և ոստիկանաց մէջ, որմէ օգուտ քաղելով Վեհափառը կը հրամայէ իր ծառային փախչել. վեր ցինս սաստիկ մարակելով, սրարշաւ ամբոխը կը ճեղքէ և կանցնի:

Այսպէս ամենաարդար բողոքը չնչին սխալով մը ապարդին հետեանք ունեցաւ: Եթէ գնացը յաշողութեամբ քաղաք համեր, շփոթութիւնը մեծ ծաւալ պիտի ստանար, որովհետեւ լի օրերը Այժեստանի մէջ շատ քիչ մարդ կը գանվի: մեծ մասը քաղաք կերթայ:

Այժմ սպանվածներու դատաստանը կը տեսնվի, հետեալ նամակով կը հաղորդեմ:

Ն Ա Մ Ա Կ Ե Բ Զ Ա Կ Ա Ց Ի Ա Յ Ա Տ Ի Ց

Անցեալներում կառավարութեան եկած մի հեռագիրը ժողովրդեան մէջ արտակարգ շշունչների պատճառ գարձաւ. ժողովրդեան ինչ դասակարգի մէջ որ մտնելու լինէիր, միայն մի առարկայի վրա կը խօսէին. մին միւսի կը պատմէին լսած ցաւլի լուրի մասին, յու սալով աւելի սաոյգ և որոշ տեղեկութիւն. իրարից իմանալ: Մարդիկ մոռցած էին անձնական ցաւերը: «Տաճիկ հասարակութիւնն անդամ զբաղած էր սրանով: Ումանք կը գովչին խօսակցութեան նիւթ եղող Արխանեան Հաճի Պալուստի քաջութիւնը, ոմանք էր ընկերների պայլ և աղջուական, հարուստ տան զաւակ լինելը, մի քանի լեզուներ իմանալը և միևնոյն ժամանակ իր հայրենական տուն տեղ, հարստութիւն, ընտանիք ձգած, ամեն տեսակ վիշտ, նեղութիւն յանձն առնե ը Ար. գործի յաջողութեան համար:

Կառավարութիւնն արգէն վաղոց է սկսած հետամուտ լինիլ նրա ամեն մի քայլափոխին: Դեռ ձմեռը նա զօրք պատրաստեց Ծէսիմի վրա հանելու ոչ թէ քիւրդերու դէմ, այլ Արխանեանի, որ այնտեղ բայն դրած կը գործէր: Եւր զօրքը երկար ժամանակ այս կամ այն կողմը պատելով, ոչինչ չը յաջողեցաւ և կորագ ուսի յետ գարձաւ: Սակայն վերջերս, երբ կեռձենիսի ճանապարհին գայմագամը թալանվեցաւ. Գարահիսարցի Արդարացած ծպառն ծածու համբէ ձեռքած կաթիկոսի կը առաջնական վերքադառնախի՝ պատահար կը հանդիպի Արմտան վերադառնախի գօրաց նըմբերին: Արխանեան, շտապելով մի յարմար տեղ դանելու պաշտպանութեան համար, կը մտնի իր ընկերներով մի բաւական մեծ պյարի մէջ, Արմտանից Յ ժամուայ հեռագրութեամբ գանվող ճանապարհի վրա: Զօրքերը բաց կանեն նրանց վրա հրացաների: Եւր կը տարածվի ամեն տեղ, որ Արխանեան պաշարգաճ է, և զօրաց խմբերը գունդագունդ վրա կը հասնեն և զարշակաց, ամճիկ գիւղացիք զուլուայի գայլագամի հրամանով: Պաշարողների թիւը կը հասնէր 600-700 մարդու, իսկ պաշարգաճներն ընդամենը 8 հոգի էին. ինքը Արխանեանը, երկու Ակնեցիք ճանիկ և Զաքարեա,

երեք Արմատացիք, նոր մտած խմբի մէջ, մի երգնկացի, նազարի տղայ Արշակը և 1 հատ Արարկեցիք: Ամբողջ 36 ժամ կը շարունակվի հրացանաձդոթիւնը. խումբը կը նեղվի հացի և ջրի կողմէն: Երեք անգամ կաշխատին կտրել բանակը և անցնել, չի յաջողվիր այլ իրանցից կը կորցնեն նազարի տղայ Արշակը, որը 7 հատ գնդակ ստանալով կը մեռնի. կը վիրաւորվի ոտիշը մի Ակնեցի, իսկ Արարկեցին հազի հազ բանակը կտրելով կը յաջողի խոյս տալ շրջակայ գտնված խմբերուն իմաց տալու, որպէս զի օդնութեան հասնեն: Մինչեւ պլ և այլ տեղեր իմաց տալու գայմագամը կը երկէ իր մայրը կինը և գիւղի աւագ քահանան, որպէս զի համոզեն, որ անձնատուր լինի: Համբի Գալուստ կը մերժէ: Բայց վերջը՝ քաղցից նեղվելով և յոյսը կտրելով օդնութեան հասնող խմբերէն, կրիին կը փորձէ կտրել թշնամու շղթան, բայց շրջապատճելով բոլոր կողմէ՝ ստիպված կը լինի անձնատուր լինել: Ամենը շատ մեծ յարդանքով կը վերաբերվէին դեպի նա, չը համարձակելով կապել անոր ձեռները ոտերը: Գայմագամը մինչև իսկ կառաջարէկ Համբի Գալուստին իր ձին, ինքը նստելով բեռնակիր ձիու վրա: Քննութեան ատեն Համբի Գալուստ յայտնած է, թէ ինք կառավարութեան դէմ ոչինչ ունեցած չէր. սակայն մի քանի անգամ տունը խուզարկեր և ահադին վնասներ հասցեր են իրեն: Ահա թէ ինչու նա քաշելով է ենու ինքզինքը պաշտպանելու, թէ նա հասարակ աւազակ, մարդասպան չէ: Երջակայ գիւղացիք կը վկայեն, թէ եւ այս մարդ է շինի էյ է, բայց ոչ մի վխաս այդ մարդէն տեսած չենք: Հովիւներ, կրսեն, թէ այդ մարդ յաճախ մեղ կը հանդիպէր և միշտ առատօրէն կը վճարէր մերուցած ոչխարի համար:

Ըուտով նրան տեղափոխեցին երգնկա, որ մօտ 40 հայ բանտարկեալ կայ, որոնց թւում մի քահանայ և մի երսելի երիտասարդ բժիշկ:

Կարնոյ վախի փաշան հոս եկեր է, յայտնի չէ դեռ ինչու. Տէլի Շէխտ ըստած շունն ալ նամակ գրած օրս Պուշ կը գնայ. Երանի սրան մի հայտ հրացան արձակող լինի. Սատուած ճայնս լսելու հաճեցի թարահի. Միշտ ուշացի.

ՆԱՄԱԿ ՊՈԼԵՒՅՑ

Դեռ յուիս ամսէն սկսած հայ լրագիրը կը տպագրէին Ենկիւրէի բանտարկելոց գատը: Սա յայտնի դատի անունը միայն կայ, մնացածը՝ այնպէս էր աղաւաղած և ծուած, որ մարդ բան մը չի հասկնար. բոլոր մասնակցողներ իսկնթ, աւազակ ու անբարոյական էին ցուցած, առաջնորդներն ապիկար, սրիկայ հրատարակած: Կառավարութիւնը բոլոր հայ թէրթերու հրամայած էր արտատպել Շէկրիսիէ Մէհափիմ՝ պաշտօնական թէրթէն այդ դատի պատութիւնը: Հայ, Հայսաստան, յեղափոխութիւն և հել մը ուրիշ բառեր, որ առաջ արգելված էին արտասանել անգամ, այժմ ազատ կը գրվէին: Կարձամիտ տաճէկը իսկ մը նապաստակ ուղեց աս մէկ հարուածով որսալ: Նախ, յուղել թիւրք տարրը հայերու դէմ. Երկրորդ ցուցնել երրոպային, որ այդ տեսակ գէպեկրու կարևորութիւն տալու չէ: Վասն զի գործ են քանի մը չարագործներու. Երրորդ, որ հայ ժողովուրդը գոհ է կառավարութիւնն և գծորհ յեղափոխականներէ:

չորրորդ ցուցնել հայուն, թէ յոյս գնելու չէ այդպիսի ցացերու վրա և թէ աղոնք հեշտ կը ճնշվին ու մասնակցողը խիստ կը պատժվին և հինգերորդ՝ քանի մը հոգի կախելովի, ահ ու սարսափի տարածել գործիչներու և հայ ազգի վրա: Ասոնցմէ միայն մէկուն հասաւ թիւրք կառավարութիւնը՝ այն է գրգռեց թիւրք տարրը հայերու դէմ. արդէն սրճարաններու մէջ իսկ սկսած են ըսել թիւրքերը. "Խիանէթ երմնիլար, բուլլար հեփսի քէսմելի (անհաւատարիմ) հայեր, ատոնց ամենքին ալ կոտրելու է):"

Վաղուց արդէն յայտնի է ձեզ, որ օ հոգի կախվեցան Ենկիւրէի և Մարզուանի դէպքերու համար. ամբողջ օրը դիակները կախ են թողնվեր ահարեկելու համար ժողովուրդը:

5-6 օր շաբունակ երկաթուղով Պօլիս կը բերէին դատապարտեալուր ձեռք, ուղը շղթայակապ: Ատոնց մէջ յայտնի է Սրբուկը (Սրբուկի), 25-26 տարու առողջակազմ, սևաչեայ, գեղեցկադէմ և համակրելի հայ կինը: Ասոր ալ ձեռք ու ուղը շղթայած էին: Սրբուկի հետ էր և Տէրէվանքի Դանիէլ վարդապետը որու կարգալուն ըրաւ այս օրերս սուտ հրաժարեալ Աշընեան պատրիարքը:

Ամեն օր բանտարկեալը կը բերվին գաւառներէ. Դիմից այլոց և քանի մը գպրոցական աշակերտներ բերվեցան վերջին օրերս:

Սկսմած են խիստ ձերբակալութինք ՚ի Պօլիս: Գաւառառացի խել մը համալ ու գործաւոր բանտ են նետած: Պատերը ձերբակալվելու և խուզարկվելու վտանգի մէջ են: Ատով կուզէ շշկած կառավարութիւնը ինեղալ հայկական շարժումը: Եւրոպական պետութեանց միջմտիլ խստացեր է:

Կասկածի ենթարկվեցաւ ՚ի միջի այլոց և Արիկ Աւանեսը, որ սաստիկ թիւրքամուլ է: Եթէ այդ տեսակը կը կասկածվի, ալ ենթադրէք մէկալներու վիճակը:

Վերջերս կառավարութեան պահանջմամբ քաղաքէս 24 ժամու մէջ աքսորվեցաւ անդիմական հիւպատոսի միջոցով իր հապտակ պ. Մէկրտիչ Եսայենը որ մտեր էր հրէշաւոր Աշընեանի կացարանը, ցոյց էր տուեր ժողովրդի դառն վիճակը, իրերու ողբարի դրութիւնը և պահանջեր էր կամ իսկոյն հրաժարական տալ, կամ հարկաւոր խիստ միջոցները գործադրել: Սրբազնագոյն Աշընեան իմաց է տուեր վարչութեան, որ և ստիպեր է աքսորել մայրաքաղաքէս:

Աշընեան սուտ հիւանդ ձևացնելով, 250 ոսկի ալ ստակ տալով Եալովայի ջրերը ղրկեց թիւրք կառավարութիւնը, իսկ տեղը հրատիրեց երուսալեմայ. Յարութիւն պատրիարքը, որ թիւրք կառավարութեանէ ալ աւելի թիւրք է և թէ Աշընեանէ ալ աւելի համարում ունի ազգի առջեւ. սա արդի պայմաններու մէջ կը ըսնայ յաջող գործիք ըլլալ կառավարութեան ձեռքը: Յարութիւն պատրիարք ՚ի գերեւ չը հանեց վարչութեան յոյսերը: Անցեալ կիրակէ Մայր Եկեղեցու մէջ նշանաւոր քարոզ մը խօսեցաւ, որ լեցուն էր բարեգործ Սովորանց առ Հայս ունեցած ինամոց ու մարդասէր վարժանց գովնամաններով ու անոր կենաց համար ըրած մաղ-

Թանընթուլ: Քարողիքը դարձաւ առանձնապես մայրերուն և յորդորեցի որ իրենց զաւակները կրթեն, դաստիարակեն հպատակութեան և հնազանդութեան հոգով՝ դեպի ամենաողորմած Սովորմանի դաշը, որ եւ գիշեր՝²⁾ քունը կտրած կը մտածէ Հայու հանգստութեան ու բարօրութեան համար:³⁾ Քանի մը վարձկան ստորագրածներ ու լրտեսներ՝⁴⁾ Սմէն՝ ըսին, իսկ ամբոխը լուռ հեռացաւ ադ զգուելի բերնեն դորս եկած աւելի զգշտ ի խօսքերու ծանր տպաւորութեան տակ:

Հասարակ ժողովրդի մէջ լուր է տարածվեր, որ Հայրիկ օծվելէ զինի պիտի հրաժարէ Աշըզեան ՚ի պատրիարքութենէ և մինչեւ ինկ կարգացը ընէ զինքը, ինչ պէս և Վանայ Պօղոս եպիսկոպոսը: Հատերը կը սննի, թէ, եթէ պյդպէս ջընէ, ոչինչ մարդ է և հպարիկ կոչման անարժան: Տեսնենք, թէ ուր կը տանի ժողովրդի պյդ հաւատը... .

Հաստատ աղբիւրէ լսած եմ, որ վերջին ժամանակս Սովորմանը ժողով մը կազմեց և տրամադրութիւն յաջանեց Հայկական գաւառներու մէջ բարեփոխումներ մը տցընելու: բայց նախարարք յայտնեցին, որ ալ Հարկ չը կայ Հայկական ինդիր մէջ բերելու, քանչի ոչ մէկ գաւառի մէջ Հայր մեծամասնութիւն չեն կազմեց և սկսած են գուրս գաղթել: Իսկ ադոնց շարժումները խափանված են, ընկերութիւնը քայլքայված և առաջնորդները կամ բանտերու մէջ կը փթիր, կամ օտար երկիր կը թափառիր: Սակայն մասնաժողով մը կազմված է, բայց ոչ թէ բարենորդմանց, այլ Հայկական շարժումը խափանելու, բողոքները իսեղելու, ճմելու, եւրոպացոց աշխը թող իշելու համար:

Ողորմնի տէրութիւն, որ յոյսը դրեր է բանտի և կախաղանի վրա միայն... .

Ս Ա Ս Ո Ւ Ն Ի Տ Ե Զ Ե Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կ. Պօլսոյ Հանրածանօթ յեղափոխական պ. Միհրան Տամատեանը, որ երկու տարիէ ՚ի վեր Մշշյ կառավարութեան Համար շատ մեծ փորձանք դարձած էր, և զոր բռնե ու Համար կառավարութեան բոլոր զանքերն ապարդիւն անցած էին, վերջապէս վերջներս բռնվացաւ, բայց ոչ թէ կառավարութեան, այլ գատ և անդէւտ հսյերու ձեռքով:

Աերդյուծեալ անձնուրաց դործիչն Ալվարիցի Սովորունը ընկերի հետ Սէմալ գիւղը գտնված միջոցին՝ սյդ գիւղի ձերբակալված Գուրգէն ուսի եղբայրը Դավիճն ու Հօրեղեայրը, գիւղի քահանան, իմանալով անոր տեղը, իմաց կուտան գիւղի մէջ գտնված ոստիկանին, որ իր հետ առնելով Խօշանցի Տէվրիշը, անոր երկու նղբայրը և Խիյանցի երկու քրդեր, կը պաշարէ գոմը, ուր պահված էին: Յեղափոխականները դիմադրութեամբ գումն դուրս կելին ու կուլին կովելով փաթչիլ, բայց այդ վատ հարման կը համար իսկ քանդեն Սատումնայի քարէ կամուքը, որ գարերու անցքերուն վկայ եղած էր: Քրդեր այլ և այլ կողմերէ կը յաջողին Տավորիկ մանել, բայց Տավորիկիք Ֆը ը ո ՞ ը ո քար քաշվելով և ճանբաները պահապաններ զնելով՝ կը սկսին կովել: Կոփուր սարսափելի կը լինի և կը տեէ ամբողջ մի որ: 35 քիւրդ և 6 հայ կը սպանվին, բազմաթիւ վիրաւորներ քրդերէն, իսկ հայերէն 4-5 միայն: Այդ կուէն վերջ քրդերը կը քաշվին, բայց ամեն կողմէ եկած զօրքերը կը պաշարեն Սասուն և ամբաներով պաշարած կը պահեն:

Սասունի պյան ճգնաժամին մէջ՝ ուրիշ տեղի հայեր միայն խօսքերով ժամանակ կանցնեն. անօքնական Սասունցիք միմիայն իրենց չախմախլիով յուսահատական ձիդ կը թափեն ոչ թէ միայն մարդակեր ճիւղազներուն, այլ և անօթութեան գէմ: Սասունցիք Այգու ընոր կը քաշվին, իրենց տուններն ու արտերը բոլոր կը քաշվին:

Երկար ատեն կովելէ և 4-5 մարդ վիրաւորելէ վերջ Սէմալի կանանց կողմանէ եղած թախանձանաց վրա եւ կը դառնան:

Մշշյ կառավարութիւնը Տամատեանի բռնվելուն լուրը առնելուն պէս ամենավատ ի սկզ եւ գեր հարիւրապետի հետ մէկ տեղ մօս 100 ոստիկաններ ճանբայ կը հանէ դէպի Սէմալ որպէս ճանբան կը դիմաւորեն և խեղմին ծեծելով և արհամարհն ով. Մուշ քաղաք կը տանին, ուր միայն երկու օր պահէ է վերջ՝ գիշերանց Բաղէշ կը տանին: Ճանբան Բաղէշ առնելու առաջ առաջ կառավարութիւնը առաջ պատրիարքի օնութեանը կը կոտրեն կը դիմաւոր գարողական Պաղման կը կոտրեն, որպէս զին դիմաւոր գարողական Պաղման կը կոտրեն:

Վլսպին թէ Տամատեան շատ յանդուգն պատասխան տուած է Հարցաքնութեան, որոյ վրա Մշշյ թիւրերն աւելի ևս վախեցած են, փոխանակ վստահ լինելու, որ երկրին խոռվարարը բռնվելով, այլ ևս խաղաղութիւն պիտի տիրէ: Թիւրերն մէկը ձեռքը ճնուան դրած կը սէ. ՚նոր գիտեմ, որ խոռվութիւնը Տամատեանի բռնվելէն վերջ պիտի սկսի:

Տամատեանի բռնվելէն վերջ կառավարութիւնը կը մտածէ, որ Սասուն ընկեննու ժամանակ է, և կը փութայ Զիլանցոց յայտնի շէյխերուն նամակ գրել և խնդրել, որ զանապան քիւրդ եցելով գրգռեն ընդդէմ Տալվորիկայ և միացած յարձակում գործելով անոր վրա, գրաւեն զայն: Մի և նոյն ժամանակ Սուշէն, Բաղէշէն, Կարինէն և Տիդրանակերտէն զօրքերը կը հաւաքվին Տալվորիկը քարուքանդ ընելու դիտաւորութեամբ: ՚Նախ՝ Բագրանցիքը Խարջանցիքը, Սասունցիքը և քանի մը ուրիշ ցեղեր հաւաքված Տալվորիկիի քով պատգամաւոր կը զրկեն, ըսելով: ՚Պագաւորին հնազանդեցէք և հարկ տուէկքը: ՚Տալվորիկիցիք կը պատասխաննեն, թէ Տամատեանի մէջ մէկ թագաւոր ըզ կայ, այլ ամեն մի քոսոտ քիւրդ կամ թիւրք թագաւորութիւն կը ծածախ կը ծածախ թիւն կը ծածախ: մնք փոխանակ թագաւորութիւն հնազանդելու, Աստուծոյ կապաւինենք և չենք թողուրու որ ոչ մի ոտք կոխէ այստեղ: Այս պատասխանին վրա, քիւրդերը մօս 1000 հոգով գաղանային ազմու կով կը յարձակին Տալվորիկայ վրա: Տալվորիկիք քրդերու ճանբանի փակելու համար կը քանդեն Սատումնայի քարէ կամուքը, որ գարերու անցքերուն վկայ եղած էր: Քրդեր այլ և այլ կողմերէ կը յաջողին Տավորիկ մանել, բայց Տավորիկիք Ֆը ը ո ՞ ը ո քար քաշվելով և ճանբաները պահապաններ զնելով՝ կը սկսին կովել: Կոփուր սարսափելի կը լինի և կը տեէ ամբողջ մի օր: 35 քիւրդ և 6 հայ կը սպանվին, բազմաթիւ վիրաւորներ քրդերէն, իսկ հայերէն 4-5 միայն: Այդ կուէն վերջ քրդերը կը քաշվին, բայց ամեն կողմէ եկած զօրքերը կը պաշարեն Սասուն և ամբաներով պաշարած կը պահեն:

Սասունի պյան ճգնաժամին մէջ՝ ուրիշ տեղի հայեր միայն խօսքերով ժամանակ կանցնեն. անօքնական Սասունցիք միմիայն իրենց չախմախլիով յուսահատական ձիդ կը թափեն ոչ թէ միայն մարդակեր ճիւղազներուն, այլ և անօթութեան գէմ: Սասունցիք Այգու ընոր կը քաշվին:

դուին զօրքերու կողմանէ; Քաղէշի կուսակալը Սէմալէն թալիք էֆ.(իտարէ ժողովի անդամ)պատգամ զրկելով, կըսէ. "Ձեզնէ գրաւած ոչխարը ջրի էշերը ձեր տուրքի տեղ համարինք, և դուք ալ հնազանդագիր մը գրեցով Սուլթանին, ըսէք, թէ Տամատեան մեզի գայթակղեցուց: Բաղէշի կուսակալը բացասական պատասխան ստանալով, ետ կը դառնայ դէպի Բաղէշ, և Ընկիր Սէմալայ միջի զօրքերն ետ կը քաշվին: Խնչպէս Կէլէկիւզէնդիք, նոյնպէս և Ընկիքիք ու Սէմալայ մէկ մաս գիւղէն լեռ կը քաշվին, և երբ զօրքերը կը քաշվին, նորէն գիւղ կը փերադառնան:

Տամատեանը ձերբակալող Տէվրիշը զզը-Աղաճէ Մուշ գնացած ժամանակ Ս. Օհաննու վանքի անտառէն խումբ մը երիտասարդներ կը հալածեն ուպանելու դիտարութեամբ, բայց գժբաղդաբար չեն յաջողեր: Տէվրիշ կառավարութեան իմաց կուտայ, որը վանուց միաբան Մկրտիչ վարդապէտէն բացադրութիւն կը պահանջէ յիշեալ իմբի մասին, թէ որոնք են: 'Սա վախնալով' թէ եր իմազարտութիւնը խոռովի, առաջին առթիւ միառմի մատնացցց կընէ միքանի երիտասարդներ. Արմենակ Տ. Մամբրէնեան, Ասատուր Տ. Օհաննեան, Յակոբ Տ. Միքայելեան, Արթին և Մկրտիչ Յակոբեան, որը արդէն հեռացած էին, բայց կառավարութիւնն այդ անձանց փոխարէն կը ձերբակալէ այլ երիտասարդներ.

Բայց ատկէ, Խնչնդերը 2 ամսէ աւել 25 ձիառով զզը-Աղաճի վարժարանի մէջ նստած անլսելի չարիքներ կը հասցնէ դիւղացոց. կախստականներուն բռնելու պատրուակաւ այլ և այլ պատուհաններով կը կեղեքէ և եր կրքերին յագուրդ տալու համար կանանց անպատիւ առաջարկութիւն և մնութիւնում կընէ:

Մշց մօտ եշու վրա բարձկած 10 օխայէն աւելի վառոք կը բռնվի, որ կը վերագրվի փախստականաց:

Գառնի գիւղի քահանան Տ. Օհաննէն և ուրիշ երկու գլխաւոր հայեր կը ձերբակալմին փախստական պահած ըլլազուր ամբաստանութեամբ:

Այսքան ճշշման և հալածանաց մէջ իսկ, թիւրքեր աւելի կը վախնան հայերէն, քան թէ հայերը որը ոչ մի ապաւէն և օգնական չունին, բայց ինքոպնութենէ:

Հ Ա Ր Ե Ր

Ա. Ա. Բերդակշի հայ մը բանտի մէջ մեռուցին տաձիկները. Թշուառականնեն 93 օր ձգած էին փօլիս, միշտ ենթարկելով քաղցի ու ծարաւի: Մեռնելու առն իրը թէ իմաց կը տան հայ քահանային, որ հազորէ: Անդինս կերթայ և կը տեսնէ, որ հիւանդ կարծեցեալը 3-4 օրուայ մեռած է:

— Նահատակվեցաւ յայտնի գործող երիտասարդ Պետրոս Հատախցեան, որը բոլոր շրջակայքի հերոսն էր և կը վայելէր նորին համակրութիւն ու սէր: Երեք ամիսն էր ինչ բանտարկված էր . . .

— Երեք հայ և երկու թիւրք, իբրև նաթանեանի և հաստ փաշացի կուսակիցներ, աքսորվեցան:

— Տաձիկներ երեք անդամ գաղտնի գիշերով շուշան կը ակակ ձգեցին. սակայն հայ գիշերպահները շուշ

իմանալով, կրակը հանդցրին: Շուկան համարեա ամբողջապէս հայերունն է: Սյօր վախնալով որ կառավարութիւնը կողմէ գրգռված հայերուն աղետարի հարուած մալ տայլ սկսան խանութները դատարկել և ապրանքները տեղափոխել իրենց տուները: — Յակոր զըթչեան կեղտու հարը, որ երկար ատենէ ՚ի վեր լրտեսութեամբ ու մատնութեամբ կը զեղէր և շատերու բանտարկութեան, նոյն իսկ դատապարտութեան պատճառ եղած էր, անցեալները վերջապէս մատնիչներու արժանի պատիմն ստացա: Տեղական յեղափոխական խմբի որոշմամբ մահուան եր դատապարտված յիշեալ մատնիչը, և անցեալները դատավճիռ ամենայն յաջողութեամբ գործադրվեցա: յեղափոխականի մը բէլովերի 2 հարուածով մտնիչը սպանվեց: Այդ մահը ընդհանուր ուրախութիւն պատճառեց ժողովրդին: Սպանիչը ցարդ ձերբակալված չէ, ըստ այժելով կառավարութեան ձեռք առած բոլոր ջանքերուն: Կառավարութիւնը զայրցիթէն սկըսած է աշ ու ձախ ձերբակալութիւններ. անեւ բանտերը լեցված են հարիւաւոր անմեղներով:

Պ Օ Լ Ի Ս. Տամատեան այժմ հոս կը գտնվի և կը դատվի. տարակոյս ըսկայ, որ ցմահ դատապարտութիւն է վճռվելու: Բերին, և աւաղակապետ Հաճի Գալուստը, որու հայրը հարուստ մէկն է և կապեր ունի բարձր պաշտօնեաններու հետ. կը յուսադրեն, որ ոսկու կախսրգեական զօրութեամբ Գալուստ պիտի աղատի: Խեղճ հայրը ըսկիտէ, թէ գեղին ոսկիներն ալ զաւակի հետ կորցնելու է:

Լ Ս Ո Ւ Մ Ենք, որ յայտնի աւաղակապետ Ա Ր Ս Բ Օ Ն իր խմբի հետ միասին Ն Ա Հ Ա Տ Ա Կ Վ Ե Լ է: Ազատվելեն 2 հոգի: Սպասում ենք մանրամասն անդեկութիւնների:

Քաղում ենք մեր, ստացած մի մասնաւոր նամակից հետեւալ բնապորշ կտորը.

"Այս տարի ևս բռնութիւնը կան մեր գաւառում. գիսացին չէ կարող ապահով կերպով արտերը սերմանել: Մանաւանդ մեր գիւղը ամենից գերազանց երկիղի է, վասն զի բոլոր չարութեանցն փոխարէն կը զնապատիկ հատոյց թշնամացն: Առ այս ամենը թշնամանալով, յայտնապէս կաշխատին Օ. գիւղի ճրագը մարելու: Թէկ մենք անվանութեամբ կը պատասխանենք հանապազ, միայն մի նեղութիւն կը ձնչէ մեզ, այս է . . . չունիք այնչափ պաշտուած անուն ու թէ ետան համար գործ թիւրք: Այս անգամ . . . դուք գիտէք . . ."

Հ Ա Յ Ց Ե Ա Ա Փ Ո Ւ Ա Կ Վ Ե Լ Տ Ա Ճ: Բ Ա Ն Տ Ո Ւ Մ

Այսօր Վանայ բերդը լիթ լեցուն է հայերով: Զերպակալութիւնների շարքեր առաջ կը բերէի, միայն այսօրուայ թղթակցութեանս նպատակն այդ չէ, այլ այն, թէ ինչ տեսակ զարհութիւն տանշանը, ինչ գաղանային չարչարանք կը կրեն յեղափոխական բանտարկեալներն անգութ տաճկի անարդ բանտում . . .

Գիշեր է. Խորին լրտեթիւն կը տիրէ. քաղաքը և ընդհանուր բանտի ամեն կալանառներ քնած են: Ն-ի առանձնարանը կը մանեն 5 բարբարուներ. դատաւորը,

միլեազիմը և Յ զաֆտիաներ։ Գիշեր ժամանակ բանտ այցելելը վաս նշան է, զգալով այդ՝ կալանաւորը սարսափահար վեր կը թուչի տեղէն, ձեռներու և ոտներու դոր շղթաներու ձայնով սարսուռ ձգելով նոյն իսկ եկած բարբարուներուն վրա։ Ն-ը գունատ, ուժասպառ է, գրեթէ դիակացած։ վերջին օրուայ շարունակ քաղցածութիւնը իր գերը կատարեր է . . . Հայ յեղափոխականը դատաւորի առաջ, մութ, խոնաւ սենեակի մէջ, կէս գիշերին, պէտքէ ՚խոստովանվի իրեն մեղքը, իրեն մասնակցութիւնը փոլիս ՚սուրիի սպանութեան մէջ։ Նա պէտք է մատնէ իրեն ընկեր, միւզիւրներուն (յեղափոխական), որը կը ձգտին ձեռք բերել Հայրենիքի անկախութիւնը և որը կը մղադրէին տաճկտկան գարշելի փոլիներէն ամենագարշէ իի, ՚սուրիի սպանութեան մէջ։ Սակայն, զուր յօյսե՞ր . . .

Ես անմեղ եմ ես չեմ ճանչնար ոչ մի յեղափոխական։ Ես ոչինչ չեմ գիտեր, կըսէ ՚Ն-ը։

Կարկուտի պէս կը թափիին Հայհոյանքներ մէկը միւսն քստմենլի, սպանալիքներ՝ մէկը միւսէն սարսափելի, բայց ՚Ն-ը անդրդժելի է։

— Ես մեղաւոր չեմ։ Ես ոչինչ չը գիտեմ, կը կրկնէ Հարի բերորդ անգամ անվեհներ կալանաւորը։

— Դու անմեղ ձևացիր, դու մի յայտնիր ընկերներուդ, քեափր օղի. հինգ օրուայ քաղցածութիւնը քեզի չը խելօքուց. մենք այլ միջոցներու կը դիմենք, կը գոռայ կապազած դատաւորը։

Քառորդ ժամէ յետ աղեկտուր ճիչ մը կայծակի արագութեամբ անցաւ բանտի բոլոր բաժանմունքներով։ Հայ կալանաւորները սարսափահար վեր թուան քնած տեղերէն, իրար անցան, մօտեցան դրան, պատուհաններուն, շնչասպառ ականջ կը դնեն։

Կրկնէ կը կրին լսկեց հեծկլոց, հառաջանք, ախ ու վախ, օգնութիւն, օգնեցէք և այլ բառեր։

Հայ կալանաւորները հասկացան գործի էութիւնը և սկսեցին բռունցքներով բաղնիկ դռները լուսամուտները հայհոյել անիմել անարդար դատաւորին, անսիղը զաֆտիաներուն, բայց ՚ի զոր . . .

Նահատակվողը ՚Ն-ըն էր. անոր ձեռները և ոտները դրեր էին փայտեայ մքենաներու մէջ և աստիճանաբար կը կրէին, որմէ անրադդը կը ծկլուէր, աղիողորմ ձայներ հանելով։ Վերջապէս նա ուշքէ գնաց, սկսելով զառանցել և այդ զառանցման մէջ անգիտակցաբար խոստովանվել իր մասնակցութիւնը և իր մի քանի պատահական ընկերներու անունները . . .

Աւրախացած դատաւորը կը կազմէ իսկոյն արձանագրութիւն և, դարաբեցներով անգութ բռնութիւնները, կառաջարկէ կալանաւորին իր խոստովանութեանց տակ ստորագրմէլ։ Ուշքի եկած ՚Ն-ը, չը յիշելով իր զառանցութիւնները, նորէն կը պնդէ։

— Ես ոչինչ չը գիտեմ, ես մեղաւոր չեմ ես ոչ մի յեղափոխականի անուն չեմ արտասաներ։

Անդուժ դահիճ-դատաւորը կը կատաղի և կը հրամայէ ձեռք առնել անսամօթ տանջանքներու նոր շարքեր . . . Զաֆտիաները կը դիմեն փայտի, շիկացած երկաթի հարացներուն և, գցելով բազմաչափար, հայու բաղմա-

չաբար որդուն ուշագնացութեան մէջ, գլխու վրա կախելով զնա, կը թողուն, կը հեանան բանտէն, անվեհներ յեղափոխականէն մի այլ անգամն խոստովանութիւն ստանալու յուսով . . .

Բարբարոսները կացնին ՚Ն-ի ընկերոջ սենեակը։ — Անհաւատի որդի. դու հիմի ներօքացած կը լինիս ՚Ն-ին մեր տուած տանջանքներէն, որ կը լսէիր ասա, ո՞վ սպանեց ՚սուրիին, ովքեր են այն իրբ միւզիլները, որք կը ձգտեն չեղած Հայաստանը վերականգնել շփոթութիւն և ապստամբութիւն պատրաստելով մեր երկրի մէջ։ ասա, թէ ոչ ՚Ն-ից շատ տանջանք կը ստանա . . .

Ամբողջ օրերով քաղցած, ծարաւ, մութ բանտի խոնա, բորբոսնած գետնի վրա շլթայակապ նստելուց դալկահար, մաշված, կաշի դարձած բանտարկեալու հաւաքելով, վերջին յժերը, թէ եւ սառնութեամբ, բայց կիսասարսափ կը պատասխանէ։

— Զը գիտեմ, ոչինչ չը գիտեմ, ՚ի զոր տեղը զիս բանտ էք ձգեր. ես անմեղ եմ։

Դա բանտարկեալի առաջին խոստովանութիւնը չէ ուստի լիրը կապավարութեան անխիղճ անսարդարադատութեան պաշտօնեաները կը գիմեն իսկոյն տանջանքներու։ Մազահատ արին յեղափոխական Հայի ընչացքի մի մասը, չստանալով ցանկալի խոստովանութիւն, բեկութ դրին թշուառականի գլխուն և մուրճի հարուածներով զարկին ուղեղը։ Սարսափելի ցաւի տակ կալանաւորը կը յայտնէ մի տասը մարդկի, որք կը ձերբակալի խոստովանողը մի երկու օրէ յետ, երբ աւելի լաւ պայմանի մէջ ապրելով կակազդուրդի և կը զգայ իր արածի բոլոր ահուելիութիւնը սաստիկ ուժով կը նիփէ գլուխը փոլիսի պատերուն և ջարդ ու փշուր կանէ։ Փոխադրված է ընդհանուր մասը, ուր բժիշկը կը բուժէ ջախջախսկած գլուխը, թէ եւ մերձ ՚ի մահ է . . .

Երբ կառավարութիւնը ոչ մի յօյս չի տաճեր բանտարկեալէն որ և է խոստովանութիւն ստանալու, կը գիմէ թոյնի զօրութեան։

Նորերումս մի Հայ միւդիր կասկածվելով՝ ձերբակալված էր. կառավարութիւնը տեսնելով՝ որ զուր են գործ գրած բոլոր միջոցները մի որ և է տեղեկութիւն սասանագրութիւնը պաշտօնելով, թուառորեց նեղճը և վերջին շունչը փեղլու ատեն տուեց ազգակիցներուն։ Ճանապարհի Հայ միւդիրը վախճանվեց և գլխու մազերը խմած թոյն և էն թափիցեցան։

Օրերով շաբաթներով քաղցած ծարաւ պահել, շիկացած, տաք երկաթով այրել մարմնի ալլ և այլ մասերը, գլխու ընչացքի մազերը փետել գլխուն բեկութ պարնել, ձեռները տախտակներու մէջ խիստ սեղմել, կքել փշատել . . . ինչ տեսակ բարբարոսական տանջանքների չեն ենթարկեր հայ յեղափոխականը լիրը Սուլթանի անարդ բանտերում . . . ոյ յոյ օ

Նուրիսատվութեան ցուցակը կը սկսենք հրսադարձ համարից, որ յօյս կը տեսնի հունվարին։

Դա շնակցութեան անծանօթներից խնդրվում է թըգ-թակցութեան և նուրիսատվութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London